ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՆՈՅԵՄԲԵՐ 15, ԹԻՒ 21. ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 142

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Edited by M. S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համիտի հրատարակչական նոր ձեռնարկը.—Հէրալտ լրագիրն և հայկական կոտորածք.—Սուլթանի չատագովութիւնը Թէրէլի գրչակովը.—Պատասխանք առ թղթակիցս.—Վիճակագիրք Ամերիկայի հայոց. Փրովիտէնս հօլեօք և հընտսըն.—Պոսթոն.— Ամերիկայ եւ կող հայոց հօթը վտանգները.—Նամակք խըմբագրութեան.—Հայքի պատուական գործակալութիւնք.—Բարեգործական Ընկերութիւն հայոց ի Նիւ Եորք.—Այլևայլք.—

ՀԱՄԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿԸ

Ներկայ թուով կը ծանօթացնենք մեր ընթերցողաց Սուլթանի նոր գործունէութիւնը հրատարակչական։ Ըստ մեր կարծեաց նա Հօփքինսըն Սմիթի միջոցաւ, որ անցեալ Սեպտ. 9 ին մեկնեցաւ Կ. Պոլսէն, նորէն պաշտօն յանձնած լինելու է Նիւ Եորքի Հէրալտին վերսկսիլ հայկական դէպքերու քննութիւնը Սուլթանին կողմանէ տրուած ոսկեզօծ հրահանգաց համեմատ։ Հէրալտ կը խոստովանի թէ Սուլթանին հրաւէրին վրայ ինքը յատուկ յանձնակատար մը, զՊատ. Հէփուօրթ, կը յղէ ի Թուրքիա։

Ճիշդ այս սոյն միջոցին է որ Ամերիկայի նախորդ դեսպանիկը, Թէրէլ, Սէն. չիւրի Մակազինի մէջ կը հրատարակէ յօդուած մը, նոյնպէս խոստովանելով թէ Համիտ խնդրած էր իրմէ հրատարակել զճշմարտութիւն(՞) ի պիտութիւն Ամերիկացւոց։ Թէրէլ բազում ներբողական կը շռայլէ Փատիշահի հասցէին, զորս թարգմանել զանց առնելով՝ միայն Համիտի խօսքերը, զորս կոչման նշանով տուած է Թէրէլ, փոխեցինք ի հայ։ Արդարև շատ հետաքրքրական է տեսնել զՀամիտ որ, արիւնոտ ձեռքը վեր առած ի տես աշխարհի, կ'ուզէ որպէս թէ ատենախօսել և բացատրել իւր հայկական քաղաքականութիւնը Ամերիկացւոց։ Համիտի խօսքերը սապէս կրնան ամփոփուիլ—իմ նախնիքս, նկատելով զՀայերն հաւատարիմ, շատ սիրեցին ու ամենակարևոր պետական գործեր յանձնեցին անոնց. բայց Հայերը իմ օրովս ապերախտութեամբ միաբանեցան Օսմանեան կայսրութիւնը կործանելու։

Համիտ սրամիտ է. նա լաւ կը ճանչնայ լրագրութեան ահագին ոյժը և ոսկիները անխնայ կուտայ այդ ոյժը յօգուտ իւր ծառայացնելու։

FACTS ABOUT ARMENIA

This pamphlet contains a report of the Sassoon massacre by a native refuȝee, the great Chester speech of Mr. GLADSTONE on Armenia and the renowned article of Dr. Dillon on the fearful condition of Armenia or many years before the late massacres.

Price 15 cents.—To write to the Edior of HAIK, 341 W. 23d St.

ՀԷՐԸԼՏ ՂՐԱԳԻՐՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՔ·

Տիրաձոչակ լրագրին դիրքը արդէն ծանօթ է մերայնոց։ Կոտորածոց ատեն Նիւ Եորքի միակ լրագիրն էր որ Թրքաց կողմէն կը խօսէր։ Որպէս թէ իւր Թրքական ընթացքը նոր փառքով մը պսակած լինելու համար՝ հիմա ելեր յատուկ ներկայացուցիչ մը յղեր է ի Թուրքիա, Հէփուօրթ անուն երէց մը, որ Սուլթանին երկու քարտուղարներուն հետ և հրէայ թարգմանի մը ընկերութեամբ պիտի այցելէ Տրապիզոն, Կարին, Վան, Բաղէշ և Այնթապ, իրողութիւններն քննելու։

Հէրալտը մեծ աղմուկ կը հանէ իւր այս ձեռնարկին վրայ Նոյ. 8ի թուոյն մէջ 12 սիւնակ լցեր է նամակով մը Հէփուօրթէն, և շնորհաւորական թղթակցութիւններով և տեղեկագիրներով ծանօթ Հօփքինսըն Սմիթի և այլոց։

Այս բոլոր 12 սիւնակներէն կը հասկցուի թէ Հէրալտ կ'ուզէ անգամ մ'ևս ձեռնարկել լոյս սփռելու Թուրքիոյ վերջին անցքերուն վրայ. հայկական ջարդերուն մասին ճշմարտութիւնն ի վեր հանել, որպէս թէ ճշմարտութիւնը արդէն պարզուած չլինէր.—Սուլթանին անձին դէմ եղած գրպարտութիւններն հերքել,—Թուրք ժողովրդի դէմ յարուցուած անիրաւ ամբաստանութիւններն ջրել։ Հ՛ա հա՛ հա՛ հա՛... հօ՛ հօ՛ հօ՛ հօ՛...

Այս բոլորը կանխաւ կը յայտարարէն Հէրալտի էջերը և միանգամայն կը պնդեն թէ Հէփուօրթ անաչառ և անկողմնակալ կերպով ճշմարտութիւնը քննելու և ի լոյս հանելու գնացեր է։ Հօ՛ւ հօ՛ւ հօ՛ւ....

Դա անամօթութի՞ւն է թէ ծայրագոյն տխմարութիւն։

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՋԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆԸ ԹԷՐԷԼԻ ԳՐՉԱԿՈՎԸ

(Սէօչուրիէն)

Ահաւասիկ թէ ինչ խօսեր է Սուլթան Համիտ Մր. Թէրէլի.—«Մինչդեռ առաջին Սուլթաններն աշխարհակալութեան երերն ինկած էին, բոլոր ձեռակերտական և վաճառական շահերն քրիստոնեայ ցեղերուն ձեռքն էին, մանաւորապէս Հայոց։

Նոցա կրօնն ալ Թուլատրեալ էր, վասն զի Միւսիւլմաններն կը թուլատրեն ամեն անոնց կրօնը որոնք զԱստուած կը պաշտեն։ Այսպէս Հայք բարեյաջող եղան և գոհ մնացին միւսիւլման իշխանութեան ներքև աւելի քան չորս հարիւր տարի։

«Իմ նախնեաց մին, Սելիմ Ա., խորհեցաւ անգամ մը թէ իւր կայսրութիւնը աւելի զօրեղ կը լինէր եթէ բոլոր իւր հպատակներն միևնոյն կրօնը դաւանէին։ Քրիստոնեայ ցեղերու կողմէն յարուցուած խռովութիւնք ինչ առիթ տուին հարցնելու Շէյխիւլիսլամին թէ արդեօք օրինաւո՞ր էր իրեն (Սելիմի) սպաննել այն ամեն քրիստոնեաներն որք մերժէին մահմետական դառնալ։ Շէյխը ֆեթվա տուաւ թէ օրինաւոր չէր լինէր, և թէ խաղաղ մնացող քրիստոնեայք պարտ էին պաշտպանուիլ։ Ուստի և Սէլիմ յարգեց ֆէթվան։

«Հայ մը, Տատեան—կը շարունակէ Սուլթանը—իմ հօրս՝ Սուլթան Մէճիտի՝ վառօդապետն էր։ Շատ հաւատացաւ։ Նա կրնար այնպիսի վառօդ շինել որ չէր զօրէր գնտակ մը այս սենեկին մէկ ծայրէն միւսը նետել։ Այսպէս նա գրանակն իւր ձեռքին մէջ ունէր։ Կը յիշեմ թէ հայրս զիս և եղբայրս, երբ պզտիկ տղայ էինք, Տատեանին տունը տարաւ, և հոն քնացանք երկու գիշեր։

«Քէօչէօղլեան, հայ, պալատին հայթայթիչն էր ամեն տեսակ կահուց ու կարասեաց և գոհարեղինաց և զգեստուց։ Ցոյժ հաւատացաւ։ Հայրս յաճախ կ'երթար անոնցը ի խնդիր հանգստեան։

«Արքունի փողերանոցի վերատեսչութիւնն ալ Հայու մը ձեռքն էր, Յակոբ էֆէնտիի։ Հարստութիւն ստանալու պատեհութիւնը մեծ էր, և նա ևս եղաւ յոյժ մեծատուն։

«Ուրիշ Հայ մը, Կիւմիւշկէրտանեան, արքունեաց իգական զարդուց նկարիչն ու հայթայթիչն էր։ Նա դեռ կ'ապրի հոս և է անհուն հարստութեան տէր։

«Պալեանք, որ հայ են, որդի ի հօրէ արքունի ճարտարապետ եղած են օսմանեան Սուլթանաց։ Նոքա շինած են զպալատներն Տօլմա Պահչէի, Չրաղանի, Պէյլէր Պէյի, Եըլտըզի, Անոյշ Ջուրց, ևն, և մին է ցայսօր կայսերական ճարտարապետ։

«Հայրս մեծ տուն մը տուաւ Տատեանի, ուր Արթին փաշա, Արտաքին Գործոց ներկայ քարտուղարս, նոյնպէս հայ, կը

բնակի հիմա: Հայրս, ի հաճել զՏատեան, տուաւ նմա ընդարձակ հող նորա բնակարանին կից, որուն վրայ Սուլթան Մէհմիտ իւր ծախիւք կառոյց հայ եկեղեցի մը, որպէս զի Տատեան հոն երթար զԱստուած պաշտել և գէշ օդ եղած ատեն չստիպուէր դուրս ելնել:

«Իմ ներկայ անձնական գանձուց նախարարը, Միքայէլ Փորթուգալ էֆէնտի, նոյնպէս հայ է: Շատ մը հայեր պաշտօնի մէջ կը պահուին նորա ձեռքով և իմ հաւանութեամբս: Անոնց անուններու և ամսականաց ցուցակը պիտի հրամայեմ որ ձեզի տրուի:

«Այս բոլոր շնորհքները իմ տանս կողմանէ Հայոց շնորհուած լինելէն վերջ, որով հարստացան, իրենց ապերախտութիւնը երևան ելաւ այնու որ դաւակցեցան և կազմակերպուեցան Օսմանեան կայսրութիւնը կործանելու: Ցեղափոխական շարժումը նեցուկ գտած է հարուստ Հայերէն:»

Կոտորածոց մասին սակայն խօսեցաւ Սուլթանը.— «Դժբաղդաբար ճշմարտութիւնը երբէք հրատարակուած չէ քրիստոնեայ լրագրաց մէջ նկատմամբ Իսլամաց և Քրիստոնէից միջև տեղի ունեցած ընդհարումներուն: Թէպէտ և ոչ մի ճըշմարիտ Մուսիւլման երբէք կը պատժէ ո և իցէ մարդ մը անոր կրօնքին համար, եթէ նա զԱստուած պաշտող մէ, սակայն երբ մարդիկ իրենց կրօնին շնորհիւ իրարու հետ միաբանած՝ ձեռնարկեն Օսմանեան կայսրութիւնը տապալելու, այն ատեն տարբեր խնդիր մը կը ներկայանայ:»

ՊԱՏԱՍԽԱՆՔ ԱՌ ԹՂԹԱԿԻՑՍ

Յ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ, ՓԷԹԷՐՍԸՆ, ԹԷՔՍԱՍ.

Շատ գովելի է ձեր հոգածութիւնը որպէս զի գաղթականութեանդ մանուկներն «առանց հայերէն կարդալ և գրել սովրելու չմեծնան:» Հետևեալ չորս դասագրքերը լաւ կը ծառայեն, զորս կրնաք ուղղակի ապսպրել հրատարակիչ Սմբատ Դաւթեանէ, (Mr. S. Davidian, 16 Kazasker Khan, Constantinople, Turkey.)

1. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ. երես 32, գին կէս դահեկան (երկու սէնթ:)

2. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ. 112 երես. գին երեք դահեկան (12 սէնթ:)

3. Բ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ. 207 երես, գին 5 դահեկան (20 սէնթ:)

4. ՏԱՐՐԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆԻ. 48 երես, գին 2 դահեկան (8 սէնթ:)

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԻԴ.—Փրովիտէնս, Ր. Ա.

Նախորդիւ գրած էի ձեզ արդէն քաղաքիս Հայ գաղթականութեան կեանքէն, ներկայիս ալ պիտի գրեմ քաղաքիս մէջ գտնուող կրթական ընկերութիւններու վրայ, յուսալով թէ պիտի հաճիք այս անգամ ևս պատուական թերթիդ մէջ մի անկիւն շնորհել ինձ.

1. Նպաստող միութիւն Խարբերդի կեդրոնական վարժարանի, հաստատեալ՝ 1894 ին. անդամք՝ 30, դրամ՝ 425.00 տոլար:

2. Ուսումն. Ընկ. Խարբերդի Քէսրիկ գիւղի, (կեդրոն՝ յՈւսար.) հաստատեալ՝ 1888 ին. անդամք՝ 150, դրամ՝ 3785.00 տոլար:

3. Դաստիարակիչ Ընկ. Խարբերդի Խուլլու գիւղի. հաստատեալ՝ 1891 ին, անդամք՝ 35, դրամ՝ 1200.00 տոլար:

4. Ուսումն. Ընկ. Խարբերդի Մօրէնիկ գիւղի, հաստատեալ՝ 1891 ին. անդամք՝ 50, դրամ՝ 1000.00 տոլար: (կեդրոն յՈւսար)

5. Ուսումն. Ընկ. Խարբերդի Շէնթել գիւղի, (կեդրոն՝ յՈւսար) հաստատեալ՝ 1895 ին. անդամք 13, դրամ՝ 800.00 տոլար:

6. Ուսումն. Ընկ. Բալուայ Պաղին գիւղի, հաստատեալ, 1892 ին. անդամք՝ 40, դրամ՝ 1400.00 տոլար:

7. Ուսումն. Ընկ. Բալուայ Սրին գիւղի, հաստատեալ՝ 1892 ին. անդամք՝ 16, դրամ՝ 846.00 տոլար:

8. Թանգարանի Միութիւն Բալուայ Խոշմաթ գիւղի, հաստատեալ՝ 1895 ին. անդամք՝ 10, դրամ՝ 200.00 տոլար:

9. Դպրոցասէր Երիտասարդաց Ընկ. Բալուայ Զէթ գիւղի, հաստատեալ՝ 1896 ին. անդամք՝ 8, դրամ՝ 150.00 տոլար:

Այս բոլոր ընկերութեանց նպատակը մի և նոյնն է, այսինքն՝ իւրաքանչիւրը կազմուած է իւր տեղային վարժարանին օգնելու համար, որ ըստ ինքեան գովելի է, մանաւանդ իրենց անդամոց բրած զոհողութիւնք:

Մի քանի խօսք ալ քաղաքիս հայ նուագածուաց խմբի տուած նուագահանդիսին վրայ, որ տեղի ունեցաւ Սեպտ. 25 ին երեկոյ։ Որոշեալ ժամանակէն առաջ հանդիսավայրը արդէն լեցուած էր հայ երկսեռ բազմութեամբ, ժամը ութ ու կէսին բացուեցաւ հանդէսը, նուագածուաց խումբը ամենայն յաջողութեամբ նուագեց մի քանի ազգային երգեր. սուգիւ գովեստի արժանի էր այս խմբի կարճ ժամանակամիջոցի մէջ ունեցած յառաջդիմութիւնը. հայ օրիորդներ նմանապէս երգեցին մի քանի անգլիերէն երգեր և Երուսաղէմ տուն փառաւոր անուն բողոքականաց հոգևոր երգը. այս պահուս հանդիսականաց միջէն կարծողներ եղան թէ այս երգին անմիջապէս պիտի յաջորդէ աղօթքը, բայց իրենց կարծիք փարատեցաւ, երբ բեմի վրայ երևցաւ նշանաւոր հայ ջուխտակահար Պ. Կարապետ Խտրեան՝ որ ընդունուեցաւ անվերջ ծափահարութեամբ. Պ. Խտրեան իւր զարկած մի քանի եղանակներով զմայլեցոյց հանդիսականները։

Ցուսկ յետոյ բեմի վրայ երևցաւ Օրիորդ Բարակեան՝ որ Ուսարէն յատկապէս բերուած էր այս հանդիսի մէջ երգելու համար։ Օրիորդ Բարակեան՝ իւր գեղանուագ ձայնիւ երգեց մի անգլիերէն երգ, երգեց այնպէս՝ որպէս կրնայ երգել ամերիկացի երգչուհի մը։ Փրովիտէնսի Հային համար առաջին անգամն էր տեսնել հայ օրիորդի մ'երգելն բեմի վրայ առանց կորսնցնելու եղանակին ամենանուրբ մասնիկը. յաւարտ երգին անվերջ ծափահարութիւններ եղան։ Եթէ կար թերութիւն մ'այն էր, սոխակն հայ, դրախտն հայ և է՞ր չ'ըլլար դայլայլիկն հայ. ո՞րքան մեծ տպաւորութիւն պիտի ձգէր Օրիորդն՝ եթէ իւր այդ սրտառուչ ձայնիւը երգէր «Իմ հայրենիք գիս կը կանչէ, հեռու եմ Հայաստանէն, Հայու որդւոյն կը վայելէ՞ հեռանալ Հայաստանէն». այս թերութիւն ի հարկէ Օրիորդին վերագրելու չէ, այլ կարգադիր յանձնախմբին։

ԱՑՏ.

ԻԵ.—Հոլեոք, Holyoke, Mass.

Հոս Հայոց թիւը 24 է։ Վեց ընտանիք է, 2 օրիորդ, 4 երիտասարդ։ Բոլորն ալ կը գործեն, պարապ մարդ չկայ։

Ց. ԳԱՐԱԿԷՕՉԵԱՆ

ԻԶ. Հըսսըն, Hudson, Mass.

Տեղւոյս Հայութիւնը 50 հոգիէ բաղկացեալ է. 26 խարբերդցի (2 տուն), 7 ակնցի (1 տուն, կինը անգղիացի.) 1 տուն արաբկերցի (կինը անգղիացի.) 5 կեսարացի. 3 ատանացի. 2 պոլսեցի. 2 սերաստացի. 1 թէքիրտաղցի. 1 մշեցի. 1 մարաշցի. 1 բալուրցի։ 7 տուները մնացող (4 կին 3 ազտիկ աղջիկ.) 5 ը դպրոց կ'երթան—4մանչ 2 աղջիկ.—38 ը բուրդի, քոթի, կօշիկի գործարանաց մէջ կը գործեն։

Գ. Ց. Պեշկէօթիւրեան.

* * *

ՊՕՍԹՈՆ

Խոնարհաբար կը խնդրեմ թոյլ տվէք ինձ պատուական Հայքի միջոցաւ պարզել զիրականութիւնն այն տխուր կացութեան ուր կը գտնուի Պոսթոնի մեծաթիւ հայ գաղթականութիւնը։ Դեռ հեռու չէ այն ժամանակը երբ Պոսթոնի ինտէլիգէնտներ բղաւում էին թէ Պոսթոնը Հայոց լուսաւոր Աթէնքն է. իսկ այս օրը տխուր իրականութիւնը հրապարակ կուգայ և Պոսթոն կը ներկայացնէ մեզ խաւարամիտներու և յետամնաց ամբոխի մի զանգուած որոյ մէջ ձուլումէ ինք Պոսթոնի բանիմաց դասակարգը՝ մոռնալով իւր բարձրութիւնը և կոչումը, չունենալով բարոյական և քաղաքացիական արիութիւն կռուելու հին կարգերու և յոռի ընդունակութեանց դէմ, բարձր պահելով ինտէլիգէնտի յառաջադիմական դրօշը, առաջնորդելու զգաղթականութիւն դէպ ի զուսաւորութիւն և կրթութիւն։ Ընդհակառակն դրանք ղեկավարվում են տգէտ ամբոխից։ Ոչինչ ունի Պոսթոնցին որով կրնայ պարծենալ իբր քաղաքացի լուսաւոր Աթէնքի. ընթերցասիրութիւն անոնց մէջ իսպառ մեռած է, քիչեր թերթ կը կարդան, այն ալ ձրի թերթեր։ Հայոց Խնամատար խղճուկ Ընկերութիւնը մինակ ունի երկու կոր գիրք զոր բարերտաբար նվիրած է Տիկին Բաֆֆին. այն ալ անկազմ ըլլալով բոլորովին ոչնչացուցած են անգործ Ատանացիներ որք կը կարդային հայերէն սորվելու համար. 5 օրինակ թերթեր ձրի կուգան ընկերութեան, անգործ և ընկերութեան դիմող Հայոց էկլէնճայ ըլլալու համար. ոչինչ ունի գիտական, մրցական և մարզական ո-

ռոնցմով կարող ըլլային օգտուել այդ ստուարաթիւ գաղթականութիւն· բանիմացներու ու մասնագէտներու թիւը մատներով կը հաշուի որոնք ոչ մի պարագային բարեհաճածեն մի լսարան բանալ և մասնագիտական մի բան խօսել այդ գիտական պաշարներից զուրկ ամբոխին։

Մինակ խելքը որոյ հաւատարիմ ստրուկն է Պոսթընցին այն է անթառամ պահել կրծքի վարդն ու ծաղիկը և պտոյտի ելնել երկար ու ոլորուն փողոցներ ժամանակին և ժամանակէն դուրս։ Հանրային գործերու ընտրութիւններ կը կատարուին ծանօթ խնամիական ձևերով, անոնք կուտան իրենց քվէն Թորոսին որ իրենց քաղաքացին կամ խնամին է, հոգ չէ թէ Թորոս Աղան կարդալ չի գիտեր։ Լաւ գիտեն նուագահանդէսներուն չալել Համիտիյէի քայլերգը····Ահա Պոսթոն։

Նիւ Պրիթն· ՎԱՀԷ

Ամերիկայ Եկող Հայերուն
Եօթը Վտանգները

Առաջին—ներս չի ընդունուիր, ետ կը դարձուենն։

Երկրորդ—կասքը դեռ չկայնած՝ վրան ելնել կամ վրայէն իջնել կը փորձէ՝ և կ'իյնայ։

Երրորդ—կագի ճրագը կը փչէ ու կը պառկի, և առաւօտուն ալ չի արթննար։

Չորրորդ—բիչ մը անգլիերէն սովրելով կը կարծէ թէ անգլիերէն գիտէ։

Հինգերորդ—Հայերէնը կը մոռնայ։

Վեցերորդ—Սուլթանին հպատակ լինելէ դադրիլ կ'ուզէ բայց և այնպէս Միացեալ Նահանգաց քաղաքացի լինելու չի՝ փութար։

Եօթներորդ—Ամերիկացի աղջկան հետ կ'ամուսնանայ։

***

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ՁԷՑԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ Է, ԳՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ԶԱՐԿ, ՆԵՐԲԻՆ ՎՏԱՆԳԲ, ՑԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆԲԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

ՆԱՄԱԿԲ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խմբագիր Տէր·— Հայ թերթի մը մէջ «Վառօդ» ծածկանունով Սիլիստրէէն գրուած նամակ մը կարդացինք որով նամակագիրը կ'ամբաստանէ տեղիս նախորդ դաստատուն իբր թէ վերջինս 660 ֆրանք չորթած լինէր «Հայ երիտասարդաց Միութեան» ընթերցարանի հասոյթէն և գրքերը կողոպտած։

Ներկայիս պաշտօնապէս կուգամք յայտարարել թէ վերոյիշեալ անձն մէկ սանդիմ խորել չգիտնալէ զատ՝ ամէն գոհողութիւն ըրած է տեղիս հայ երիտասարդութեան զարգացմանը համար։

Վ· Ատենադպիր Ատենապետ
Ց· ՍԻՄՈՆԵԱՆ Ա· Մ· ՍՏԵՓԱՆԵԱՆ
Սիլիստրէ 22 Հոկտ· 97· (Կնիք)

Հայոց լսարանին մէջ ձեր ըրած ատենախօսութիւնը կարդացի և շատ գոհ եղայ։ Երանի՜ թէ ձեր խօսած խօսքերը ներկայ երիտասարդութեան մտքին մէջ երկսայրի սուրի պէս թափանցէին որ ըզգաստանային։ Սնոտի և փուճ խօսակցութեամբ ժամավաճառ կը լինին։ Անցեալ օր Ուստրը էի, տեսայ որ պարապ վէճով կը զբաղին· բողոքականի և լուսաւորչականի վէճով։ Նոյնը կը լսեմ Պոսթոնի համար։ Թէպէտ ասդիէն անդիէն ձայներ կը լսուին թէ խնդիրը ազգային է, վէրքը ազգային է, միութեամբ գործելու են բոլոր Հայերը, լսող չկայ։ Գործ կայ գործող չկայ։ Մեզի ամօթ է մի գոնէ 200 հատ որբ Ամերիկայի մէջ չպահենք։ Ինչո՞ւ որբանոց մը չի բացուիր· մինթ 10 կամ 15 հազար Հայերը չե՞ն կրնար 5 կամ 8 սէնթ շաբաթը վճարել ինպատ որբանոցի մը։

Գ· Ց· ՊԷՇԿԷՕԹԻՒՐ

(Պատ· Ս· Ա· Աբրահամեան, որ Օքսֆորտի ի Մէջն, ամերիկական եկեղեցւոյն երէցն է, կը գրէ հետևեալը—)

Տեղիս բնակիչք, ունենալով հայ երէց, կ'ասեն· We sent missionaries to Armenia, and now Armenians send missionaries to America.» (Առաջ մենք միսիոնար ղրկեցինք ի Հայաստան, հիմա Հայք կ'առաքեն մեզի միսիոնար։)

Կը խնդրեմ հետևեալն յիշէք ՀԱՅՐի մէջ։ Ես այս տարի հոգ տարած եմ Հա-

յոց պատիւը պաշտպանել Սիւրիացի Արաբներու դէմ։ Սիւրիացիք նահանգիս ամեն կողմը կը թափառին փերեզակութեամբ, և «մենք Հայ ենք» ասելով կը խաբեն Ամերիկացիները՝ անոնց ծախելով իրենց մանր վաճառքը խոշոր գներով։ Դժբաղդաբար շատերը անմաքուր և անպարկեշտ են (թէ այր և թէ կին) հետևաբար չեն տար լաւ գաղափար Հայոց վերայ։ Ես թէ բանիւ բերանոյ և թէ թերթերու միջոցաւ անոնց ստախօսութիւնը կը ջանամ խայտառակել։ Ուրիշ նահանգաց Հայք ալ թող ուշադիր գտնուին։

«ՀԱՅԿԻ»

ՊԱՏՈՒԱԿԱԼ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

Մեծ. Տեարք

Յ. ՆՇԻԿԵԱՆ, Ֆրէզնոյ, Քալիֆորնիա.

Ա. Յ. ՏԷՐՈՅԵՆՑ, Փրովիտէնս, Ռ. Ա.

Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Թրոյ, Ն. Ե.

Ն. ՃԱՖԷՐԵԱՆ, Ֆոլ Ռիվըր, Մասս.

ՏԻԿԻՆ ՎԱՐԴՈՒՀԻ Յ. ՅԱԿՈԲԵԱՆ, Պրուքլին՝ Ն. Ե.

ՅՈՎՍԷՓ Մ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ, Նիւ Պրիթէյն, Քոն.

ՆԻԿՈՂՈՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ, Ուօքիկըն, Իլ.

Մ. Յ. ՁՐԹԱՖԵԱՆ Սըմիթ, Ն. Ճ.

ԲԵՆԻԱՄԻՆ ՇԷՔԷՐՃԵԱՆ. Մորիսթաուն, Ն. Ճ.

Զ. ՖԻԼԻՓՍԸՆ, Եունիըն, Ն. Ճ.

ԼԷՈՆ Յ. ՍԷՅՐԱՆԵԱՆ Լին, Մասս.

ՄԵՐ ԶԱՐԸՆ

ՄԱՐԶԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ. ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած և.և.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սենթ։

Բացուած է Հայքի ութերորդ տարւոյ բաժանորդագրութիւնը

ՀԱՅԿԸ

պիտի հրատարակուի 1898ին
ինչպէս այս տարի
ամիսն երկու անգամ
տարեկան բաժանորդագինն է
երկու տոլար
կամ
տասը ֆրանք
ամեն երկրաց համար
վճարումը կանխիկ է

Դրամ կրնայ յղուիլ մընի օրտրրով, մանտա տը փոսթով, փոխ—գրով, կամ ապահովագրեալ նամակի ծոցով ֆռանսական դէմպռ բոսթ ուղարկելով առ խմբագիրն

Dr. M. S. Gabriel
341 West 23d st., New—York

Ցղմունք մեզի կը հասնին եթէ նոյն իսկ սա պարզ հասցէով ուղղուին—Editor of Haik, New York, E. U. d'Ame'rique

Կը յուսանք թէ օտար երկիրներու մեր յարգոյ բաժանորդները պիտի փութան, ինչպէս իրենցմէ շատերուն բարի սովորութիւնն է, յղել մեզ իրենց բաժանորդագինը, այնպէս որ Յունուարէն առաջ մեր ձեռքը հասնի։

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Ընկերութեանս Գործադիր ժողովոյ կազմութիւնը, ընդհանուր ժողովոյ վերջին նստին մէջ տրուած որոշման համեմատ, ամբողջացած է և անդամքն են հետևեալք—

Տեարք

Պօղոս Յակոբեան,
Տիգրան Քէլէկեան,
Ս. Շիշմանեան,
Յ. Արզումանեան,
Մեսրոպ Եէշիլեան, քարտուղար,
Զաւարճեան, գանձապետ,
Յ. Պ. Հայկունի, ատենապետ։

Գործադիր ժողովը նիստ ունեցաւ Նոյ. 6ին, ուր Օժանդակ Յանձնախումբի անդամներն ալ հրաւիրուած էին և քաջալերական տեղեկութիւններ տուին ու առին։ Ընկերութեան անդամոց թիւը արագապէս կ'աճի շնորհիւ այս անձնուէր երիտասարդաց անխոնջ ջանքերուն։

ՏՅԼԵՒՏՅԼՔ

Կիւրակի Նոյ. 7 ին, Ն. Ե. Հայ—Աւետ. եկեղեցւոյն սրահին մէջ 1895 ի և 96 ի կոտորածներուն միջոցին զոհուած հարիւր հազար Հայ Մարտիրոսաց ի յիշատակ հոգևոր պաշտամունք կատարուեցան։

Սբ. Մարտիրոսաց ի յիշատակ խօսեցան ամերիկացի երկու երէցներ և Հայոց հանրածանօթ բարեկամը Mr. Greene։

Տիկ. Վիրժին Տօնճեան դաշնակ ածեց և երգեցիկ խումբ մը պաշտաման յատուկ երգերը երգեց։

Նիւ Եորքի հայ գաղթականութիւնը մաս միթինկ մ'ունեցաւ Հոկտ. 31 ին՝ ատենապետութեամբ Տիար Յովհաննէս Թաւշանճեանի՝ ցուցնել Հայոց համամտութիւնը Սէթ Լոյի ընտրելիութեանը ի քաղաքապետութիւն Մեծագոյն Նիւ Եորքի։ Տեարք Բէպպպեան, Հայկունի և մի քանի ամերիկացիներ ատենախօսեցին ի նպաստ Սէթ Լոյի, և իրենց խօսքերը յաճախ շեշտուեցան ունկնդրաց ուժգին ծափահարութեամբք։ Գոհացուցիչ էր տեսնել հայ տիկիններու ներկայութիւնն այս ժողովին մէջ. մաղթենք որ իրենց ներկայութեամբը միշտ աւելցնեն հայ ժողովներու ազդեցութիւնն ու շնորհքը։

***

Նիւ Եորքի Ասորի գաղթականները իրենց մանուկներուն կրթութեանը համար դպրոց մ'են բացեր Ուօշինկթըն փողոցում, ուր կան այժմ 34 ուսանողներ։

Մուշէն ստացուած հետևեալ լուրը կը հաղորդէ ՄՇԱԿ. «Կառավարութիւնը մի վաշտ զօրք ուղարկեց քուրդ—հերոս Մուսա պէկի որդու դէմ, որ մի քանի հարիւր զինուած քիւրդ ձիաւորներով ապստամբված՝ մեծ սարսափի մէջ էր գցել խաղաղ հասարակութիւնը, և յաջողեց բռնել ու բանտարկել։»

***

Ռուսիոյ 130 միլիոն բնակչաց հարիւրին ութը միայն կարդալ գրել գիտեն։

Ռուսիա Միսիոնարներ կը յղէ յԱնգլիա ուսուցանել օրթոտոքս եկեղեցւոյ վարդապետութիւններն։

***

ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ

220 Bergenline Ave, Union Hill, N. J.

Եուներն Հիլ, ՆՈՒ ՃԷՐՋԻ

Այս վաճառատան մէջ կը ծախեն անհաւատալի ածանութեամբ մահճակալ (bed—stead), կարպետ, մոմազօծ կտաւ (oil—cloth) և (lanolium), պատկերի շրջանակ և պատկեր, աթոռ, նստարան, սեղան և այլ տնական կահ կարասի։ Նաև կը գործեն կարպետ (rag carpet)։

Կը փափաքինք ունենալ rag carpet գործող փորձ ոստայնանկ մը հայագգի. դիմել վերոյիշեալ հասցէին։

***

Ըստ Պուտափէսթի Revue d'Orient ին՝ Պարսից Նասր–էտ–տին Շահն սպաննուեցաւ ոչ քաղաքական կամ աստուածաբանական պատճառաւ այլ ի գոհացումն անձնական վրէժխնդրութեան մը։ Սպանիչն, Մէհմէտ Ռիզա, վաճառական էր և առնելիք ունէր Շահին որդիէն, երբ պահանջեց առնելիքը, բանտ նետուեցաւ, ուր մնաց 7 տարի։ Յետոյ Կ. Պոլիս փախաւ և անկէ ծպտեալ վերադառնալով ի Թեհրան, սպաննեց զՇահն։

***

Պէռլին, Նոյ. 3. Ֆ. Յայթունկի կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ Պուլկարիա երէկ ծանուցած է Դրան որ եթէ եպիսկոպոսական խոստացուած պէրաթները այսօր չշնորհուէին, Պուլկարիա իւր անկախութիւն պիտի յայտարարէր և իւր դիւանագիտական ներկայացուցիչն Կ. Պոլսոյ յետս պիտի կոչէր։

Ֆռանսայի հողէն գայլերը անճիտելու ջանք կը լինի։ 1883 ին 1,316 գայլ սպաննած էին։ Անկէ ի վեր ամեն տարի գործը կը թեթևնար, և 1896 ին 171 գայլ միայն սպաննած են։ Կը յիշեմ թէ իբր 10 տարի առաջ բոլոր Ֆռանսայի մէջ իբր 3,000 գայլ կայ կ'ասէին։ Սուլթան Համիտ չի՞ ուզեր արդեօք Թուրքիոյ գայլերուն վիճակագիրը պատրաստել տալ, ցուցակին վերի գլուխը դնելով զիւր պատկառելի անուն։

***

Սուլթան Համիտ ամէն ջան ի գործ կը դնէ Փոքր Ասիայէն հանել ամերիկացի միսիօնարներն, Քրօնիքլի ուղղուած հեռագրի մը համեմատ։

ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ
ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

Առեճախօսութիւճ Մ. Ս. Գաբրիէլեաճի

Առ Ամերիկեաճ Եկեղեցիս,

Հանդերձ Անգլիերէն Բնագրովն

32 երես։

Այս ատենախօսութիւնը կը ցուցնէ Տէրութեանց պատասխանատուութիւնը հայոց կոտորածներուն համար և կ'արտայայտէ Հայ ազգին սուրբ բարկութիւնը Եւրոպիոյ դէմ։

Գինն է 1 սէնթ կամ 50 սանթիմ։

Գրել ՀԱՅՔի խմբագրին։

Ա. Մ. ԳԱՐԱԳԷՕԶԵԱՆ

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկւով փոխանակագիր Կ. Պոլսոյ վրայ։ Քաղաքէս հեռու գտնուողք կարող են դրամը ղրկելով փոխ-գիրը ստանալ։

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի։

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ՀԻՒՐԱՆՈՑ

ԼԱՆԹԷԼՄԻ

Նախաճաշ	40 սէնթ
Կէս աւուր ճաշ	40 սէնթ
Ընթրիք	75 սէնթ

Գինւով մէկտեղ

Սենեակի վարձք Հօթէլին մէջ

օրը 75 սէնթ

4 Union Square (East side) bet. 16th & 17th sts.

ԳՈՐԳԵՐԸ ԻԲՐԵՒ ԸՆԾԱՅ

Անոնք որ կ'ուզեն իրենց գործատեարց և կամ այլ բարեկամաց նոր տարւոյ առթիւ տաճկական գորգ (խալը) նուիրել, կրնան ինէ գնել շատ աժան գնով։ Ունիմ նաև չինական և ճափոնական յարմար վաճառքներ։

Աղեքսանդր Թարաքճեան
Alex. T. Darak
77 West 11th St. City.
Վեցերորդ Էվինիւի անկիւն։

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվլինիու Նիւ Եորք
26դ և 27դ. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍԸՆԻ

ԴԵՂԱՐԱՆԸ

կը գտնուի ի Թիւ 262 Ութերորդ Էվընիւ, Մեծ Օբէրային հանդէպ 23 և 24 րդ փողոցներուն միջև։

Վստահելի դեղեր, բանաւոր գներով կը ծախենք։

ՅԱՐՄԱՐ ԸՆԾԱՆԵՐ

Արևելեան ասեղնագործ լաւ ապրանքներ, Քրիսմըսի առթիւ նուէր տալու շատ յարմար՝ փիանոյի և սեղանի ծածկոցներ, անկողնոյ սփռոցներ, բարձի երեսներ, պատուհանի վարագոյրներ ևն. ևն։ Գներն խիստ չափաւոր են։ Գնողք կրնան դիմել Նիւ Եորք իսթ 32 րդ. փողոց 202 թիւ Ս. Գալուստեանի։ Եւ 220 Պըրկընլայն Էվընիւ Եունիըն Հիլ, Գաբրիէլեան եղբարց։ Ուրիշ քաղաքներէ նամակաւ եղած յանձնարարութիւնք գոհացուցիչ կերպիւ կը կատարուին։

Զ. Ֆիլիփսըն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ